ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

«ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025

Երևան 2026

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ ԿՌԿ) ֆեմինիստական իրավապաշտպան կազմակերպություն է: ԿՌԿ-ի տեսլականն է հայաստանյան հասարակությունում կանանց հավասար և ինքնորոշ կարգավիճակի հաստատումը և հայրիշխանական հասարակարգի կողմից կնոջ նկատմամբ կիրառվող բռնաճնշումների և սահմանափակումների վերացումը: ԿՌԿ-ն իր գործունեությամբ ձգտում է հասարակության մեջ վարքային և նորմատիվային փոփոխության՝ ներազդելով պետական քաղաքականության, սոցիալ-մշակութային և օրենսդրական դաշտերի վրա:

ԿՌԿ-ն հիմնադրվել է 2003թ.-ին և **գործում է թեմատիկ <u>3 հիմնական ուղղություններով՝</u>**

- ֆեմինիստական ապահով տարածք և կանանց ու աղջիկների զորեղացում
- սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք
- կանանց իրավունքների ադվոկացիա

ԿՌԿ թեմատիկ ուղղությունների մասին պատմող կարճ հոլովակը դիտել կարող եք <u>այստեղ</u>: Սույն փաստաթուղթն ամփոփում է ԿՌԿ 2025թ. գործունեությունը՝ ըստ հիմնական թեմատիկ ուղղությունների:

Ֆեմինիստական ապահով տարածք

Իր գոյության առաջին օրերից Կանանց ռեսուրսային կենտրոնը փորձում է ստեղծել միջավայր, որտեղ տարբեր խմբերի կանայք կարող են ազատ շփվել, կիսվել փորձով և քննարկել իրենց համար կարևոր թեմաները՝ առանց խտրականության վախի:

ԿՌԿ ֆեմինիստական ապահով տարածքը գործում է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 12:00-18:00 (փակ ենք միայն չորեքշաբթի օրերին) և բաց է աշխատելու, սովորելու, գրադարանից օգտվելու և թիմի հետ կապ հաստատելու համար:

Տարվա ընթացքում կենտրոնը կազմակերպում է հանրային ու փակ քննարկումներ, կրթական դասընթացներ, ֆիլմերի դիտումներ, ընթերցանություններ և այլ միջոցառումներ, որոնք նպաստում են այցելուների բարօրությանը և հոգեկան առողջությանը: 2025թ. մոտ 1000 մարդ այցելել է կենտրոնի ֆեմինիստական ապահով տարածք՝ մասնակցելու միջոցառումներին և օգտվելու մատուցվող ծառայություններից:

Կանանց ռեսուրսային կենտրոնի ֆեմինիստական ապահով տարածքը տարեսկզբից արդեն նոր հասցե ունի՝ Բաղրամյան 47: Այն գտնվում է Բաղրամյան և Բարեկամություն մետրոյի կայարանների մեջտեղում՝ յուրաքանչյուրից ընդամենը 7 րոպե հեռավորության վրա: Կարող եք գտնել մեզ այս կարճ հոլովակի միջոցով ևս:

Տեղեկատվական հանդիպումներ

Մեր նոր ֆեմտարածքում շարունակել ենք թեմատիկ քննարկումներ կազմակերպել հետևյալ թեմաներով.

1. Կանայք և հասարակական տրանսպորտի թանկացումները. խորացող անհավասարություններ,
2. Հայաստանի բնապահպանական ճգնաժամերը և կանայք,
3. Կյանքն ամուսնությունից հետո,
4. Ինչպե՞ս է չվճարվող աշխատանքն ազդում կանանց վրա,
5. Ինչպե՞ս մոբիլիզացնենք մեր համայնքները. կանանց քաղաքական ակտիվության կարևորությունը

Եվս երկու ֆեմախոսություն իրականացրել ենք համալսարաններում՝ ներգրավելով սոցիալական աշխատանքի և հոգեբանության ֆակուլտետի ուսանողներին.

1. Սեռական բռնությունն ու սոցիալական աշխատանքը. խնդիրներ, արձագանքներ և ֆեմինիստական մոտեցումներ
2. Գենդերային բռնությունը մեր շուրջը. խոսենք անկեղծ

Արշավներ

Տարեսկզբին իրականացրել ենք #ԽոսումենԿինԻրավապաշտպանները արշավը, որի շրջանակում հրապարակել ենք հոլովակներ 6 կին իրավապաշտպանների հետ, որոնք գործունեություն են ծավալում կանանց, ֆեմինիստական և քվիր իրավունքների ու հիմնահարցերի ոլորտներում:

Ինչպես նաև՝ ստեղծել ենք իրազեկող հոլովակ կին իրավապաշտպանների աշխատանքի մասին: Նաև երկու մարզային հանդիպում ենք կազմակերպել՝ Կանանց հզորացման ռեսուրս կենտրոնում (Հրազդան) և Ալվան ծաղիկ սոցիալ-կրթական կենտրոնում (Գյումրի)՝ կին իրավապաշտպանների աշխատանքի տեղային լուսաբանման համար:

Գենդերային բռնության դեմ պայքարի 16-օրյակի ընթացքում (նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10-ը) Երևանի «Բարեկամություն» մետրոյի կայարանում երկու մեծ էկրաններով ցուցադրվել են անիմացիաներ և նկարազարդումներ՝ իրազեկելով պայքարի մասին և տրամադրելով իրավաբանական խորհրդատվության հեռախոսահամար:

Նպատակ ունենալով բարձրացնելու իրազեկվածությունը կանանց նկատմամբ գենդերային բռնության, կին իրավապաշտպանների և մարդու իրավունքների վերաբերյալ՝ զուգահեռ իրականացված սոց. մեդիա արշավը կենտրոնացել է պաստառների և անիմացիաների միջոցով լայն լսարանի ներգրավելու վրա:

16-օրյակին ընդառաջ նաև հայտարարել էինք թեմատիկ էսսեների բաց կանչ, որի արդյունքում ընտրվել և արշավի ժամանակ հրապարակվել են 3 էսսեներ՝ «ակտիվիստական», «գեղարվեստական» և «համոզիչ/persuasive» անվանակարգերում:

Մարտի 8

Այս տարի ևս մարտի 8-ին իրականացրինք հանրային ակցիա՝ միավորվելով օրվա պատմական նշանակությունը վերահաստատելու շուրջ:

Հաշվի առնելով, որ կապիտալիստական և հայրիշխանական համակարգերի ճնշման տակ մարտի 8-ը տարիների ընթացքում վերածվել է ծաղիկներ նվիրելու և ժամադրության գնալու օրվա, որոշեցինք հենց այդ խնդրին անդրադառնալ:

Այպիսով՝ գրաֆիտի պատ տեղադրեցինք Երևանի կենտրոնում՝ հնարավորություն տալով անցորդներին ֆեմինիստական գրաֆիտիներ անելու և թեյի շուրջ քննարկելու մարտի 8-ի իրական պատմությունը:

Ակցիային Epress-ի անդրադարձը հասանելի է այստեղ:

Աշխատարաններ և ճամբարներ

Մեր հերթական արտ-ակտիվիստական աշխատարանն այս անգամ Գյումրիում էր: Ուրախ էինք երիտասարդ կանանց ու աղջիկների խմբի հետ քննարկել տարբեր ֆեմինիստական գաղափարներ և իրականացնել դրանք արվեստի միջոցով: Շնորհակալություն նաև մեր գործընկեր Ալվան Ծաղիկի հկ-ին միշտ պատրաստակամ համագործակցության համար:

«Աղջիկները խոսում են»-ը ութշաբաթյա ծրագիր է, որի ընթացքում շուրջ 10 դեռահաս և երիտասարդ աղջիկներ քննարկում են տարբեր թեմաներ ֆեմինիստական տեսանկյունից՝ սկսած անձնական սահմաններից և առողջ հարաբերություններից մինչև մարմնի դրական ընկալում և ակտիվիզմ: Ծրագիրը հնարավորություն է տալիս աղջիկներին ապահով հարթակում իրենց հուզող հարցերը քննարկելու:

Օգոստոսի 2-4-ը տեղի ունեցավ մեր «Ֆեմինիստական զորեղացման ճամբարը (‘25)», որին մասնակցեց 17 երիտասարդ Երևանից և մարզերից: Ինտերակտիվ սեսիաների միջոցով մասնակիցները ծանոթացան մի շարք թեմաների, այդ թվում՝ գենդեր, ֆեմինիզմ, մարմնի դրական ընկալում և սեռական ու վերարտադրողական առողջություն: Իսկ յոգան և երեկոյան խաղերը նպաստեցին մասնակիցների միջև սերտ կապերի ամրապնդմանը:

Կանանց իրավունքների դասընթացներ

Կազմակերպել ենք չորս կանանց իրավունքների դասընթաց (ԿԻԴ)՝ մարտին, հունիսին, սեպտեմբերին և հոկտեմբերին, որոնց մասնակցել է շուրջ 70+ անձ:

Դասընթացների արդյունքում իրականացվել են մի շարք նախաձեռնություններ՝ քննարկումներ, յոգայի ռիթրիթ, վավերագրական ֆիլմի նկարահանում, հետազոտություն և այլ ծրագրեր:

Իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն

Կանանց ռեսուրսային կենտրոնը շարունակում է տրամադրել անվճար իրավաբանական խորհրդատվություն կանանց: Այս տարի մեր իրավաբանը տրամադրել է 367 զանգով և տեղում խորհրդատվություն:

Այս ընթացքում, կենտրոնի հոգեբանն անվճար հոգեբանական խորհրդատվություն է տրամադրել 6 խմբի (յուրաքանչյուրը 8 սեսիա), և անհատական խորհրդատվություն՝ կին իրավապաշտպաններին ու ակտիվիստներին:



Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք

Սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքի ուղղությամբ շարունակում ենք մեր իրազեկման աշխատանքները երիտասարդ կանանց հետ առողջ հարաբերությունների, սեռական և վերարտադրողական իրավունքների, բռնության կանխարգելման շուրջ: Մեր հանդիպումները ԿՌԿ կամավորների ու հանրության հետ շարունակական են այս ուղղությամբ:

Հունվարին հրավիրել էինք Առողջապահության նախարարության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների, մանկաբարձ-գինեկոլոգների և հանրային առողջության իրավաբանների՝ քննարկելու աբորտի վերաբերյալ ՀՀ օրենքը և դրա համապատասխանությունը միջազգային չափանիշներին ու լավագույն փորձին:

Հանդիպման եզրափակմանը հյուրընկալեցինք ԱՀԿ գրասենյակի մասնագետներին, որոնք առցանց տարբերակով միացան մեզ՝ ներկայացնելու ԱՀԿ-ի առաջարկությունները ապահով աբորտի վերաբերյալ:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024 թ. մայիսին քննարկման դրվեց «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծը, որն ընդունվեց Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ուժի մեջ մտավ 2024թ. օգոստոսի 6-ին:

> *Համաձայն նոր կարգավորումների՝ դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատումը՝ մինչև 8 շաբաթական հղիության ժամկետը, կարող է իրականացվել հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային պայմաններում՝ մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպություններում: Նախկինում հղիության ընդհատումները իրականացվում էին միայն հիվանդանոցային պայմաններում:*

Աբորտի կլինիկական ուղեցույց

Անհրաժեշտություն առաջացավ վերանայելու հղիության արհեստական ընդհատման դեպքում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կլինիկական ուղեցույցի այն դրույթները, որոնք վերաբերում են դեղորայքային աբորտին՝ համապատասխանեցնելով դրանք «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքին և ԱՀԿ-ի տեղայնացված առաջարկություններին:

Մեր կազմակերպության ջանքերով մշակվեց «Դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատման դեպքում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման» կլինիկական ուղեցույցը, որը հաստատվեց ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2025թ. հունիսի 13-ին N 3569-Լ հրամանով:

Այս ուղեցույցը հնարավորություն կտա առավել հասանելի դարձնելու դեղորայքային աբորտը:

Վերապատրաստման դասընթացի հավաստագրում Առողջապահության նախարարության կողմից

Սեպտեմբերին Առողջապահության նախարարության կողմից ընդունվեց դեղորայքային աբորտի նոր փոփոխությունների վերաբերյալ վերապատրաստման դասընթացի հավաստագրումը, որի հիման վրա հոկտեմբերին կազմակերպել ենք վերապատրաստման դասընթաց մանկաբարձ-գինեկոլոգների համար:

Բուժաշխատողներին ներկայացվեցին աբորտի օրենսդրական կարգավորումները և փոփոխությունները, ինչպես նաև նախաաբորտային և ետաբորտային խնամքը և միջամտության առանձնահատկությունները թեմաները: Դասընթացին մասնակցել է 50 մանկաբարձ-գինեկոլոգ:

Արտագնա հանդիպում բուժաշխատողների և Առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ

Նոյեմբերին ունեցանք արտագնա հանդիպում Երևանի և մարզերի 20 մանկաբարձ-գինեկոլոգների հետ: Հանդիպմանը քննարկվել ենք դեղորայքային աբորտի իրականացման ընթացակարգերը արտահիվանդանոցային պայմաններում:

Մեզ միացել էին նաև ՀՀ առողջապահության նախարարության և Պետական առողջապահական գործակալության ներկայացուցիչներ: Սա լավ հնարավորություն էր բոլոր հարցերի պարզաբանման, ինչպես նաև համագործակցությունն ուժեղացնելու համար:

Վերապատրաստման երկօրյա դասընթաց ընտանեկան բժիշկների և մանկաբարձ-գինեկոլոգների համար

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող «Մարդու իրավունքները փախստականների հետ և նրանց համար» ծրագրի շրջանակում կազմակերպեցինք երկօրյա վերապատրաստման առցանց դասընթաց ընտանեկան բժիշկների և մանկաբարձ-գինեկոլոգների համար, որին մասնակցեց 100 բուժաշխատող՝ ստանալով 10 տեսական կրեդիտ:

Դասընթացի ժամանակ մասնակիցների հետ քննարկվեցին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են անձի վերարտադրողական առողջության իրավունքը, վերարտադրողական առողջության միջազգային կարգավորումները, բուժաշխատողների կողմից գենդերային բռնության դեպքերը, տարբեր խմբի կանանց վերարտադրողական առողջության հիմնախնդիրները և արձագանքը:

Դասընթաց-քննարկում բլոգերների և լրագրողների համար

Հոկտեմբերին կազմակերպվեց մեկօրյա վերապատրաստման դասընթաց լրագրողների և բլոգերների համար, որի ընթացքում ներկայացվեցին հետևյալ թեմաները՝

- թվային անվտանգություն և անձնական տեղեկության պաշտպանություն,
- ապատեղեկատվության աղբյուրներ,
- փաստերի ստուգման գործիքներ,
- ինչպես են գենդերային հիմնախնդիրները դառնում ապատեղեկատվության թիրախ և ինչ հետևանքներ են թողնում հանրության վրա:

Վերապատրաստման արդյունքում 5 լրագրողներ և բլոգերներ հանդես եկան թեմատիկ նախաձեռնություններով, որոնք վերաբերում էին հղիության արհեստական ընդհատմանը որպես կնոջ հիմնարար իրավունք: Ահա որոշ նախաձեռնությունների արդյունքներ, որոնց կարող եք ծանոթանալ.

- «Ես առողջ եմ». Աբորտը՝ որպես բուժօգնության տեսակ
- Վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիության անհավասարությունը ՀՀ մարզերում. Իրավունք, ռիսկ և իրականություն | Առավոտ – Լուրեր Հայաստանից
- Հղիության արհեստական ընդհատումները ՀՀ-ում. պատճառներն ու հետևանքները
- Աբորտը՝ կնոջ հիմնարար իրավունք
- Անվտանգ հղիության արհեստական ընդհատումը՝ մարդու իրավունքների հիմնարար բաղադրիչ

Կանանց իրավունքների ադվոկացիա

Կանանց ռեսուրսային կենտրոնի ադվոկացիոն թիմը շարունակում է իր գործունեությունը՝ նպատակ ունենալով ազդելու պետական քաղաքականությունների և օրենսդրական գործընթացների վրա՝ ապահովելով գենդերազգայուն, ներառական և իրավունքների վրա հիմնված մոտեցում: Թիմը նաև խթանում է համագործակցությունը կանանց իրավունքներով զբաղվող տարբեր կազմակերպությունների միջև և մասնակցում է միջազգային հարթակներին՝ Հայաստանի փորձը տեսանելի դարձնելու և նոր գործիքակազմ մշակելու նպատակով:

Աշխատանքային իրավունքներ

2025թ. հունվարի 16-17-ին Կանանց աշխատանքային իրավունքների հարթակի շրջանակներում մեր ադվոկացիոն թիմը կազմակերպեց երկօրյա քննարկում, որի ընթացքում վերլուծեցինք ՀՀ կառավարության կողմից ընդունված Զբաղվածության ռազմավարությունն ու մշակման փուլում գտնվող գործողությունների ծրագիրը:

Կանանց աշխատանքային իրավունքների հարթակը ձևավորվել էր «Սոլիդարիթի Սենթեր» հայաստանյան գրասենյակի հետ համատեղ 2024թ. հունիսին: Հունվարի քննարկման արդյունքում առաջարկներ ձևակերպեցինք գործողությունների ծրագրի վերաբերյալ և ներկայացրեցին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Ադվոկացիա՝ Միավորված ազգերի կազմակերպության միջոցով

2025թ. փետրվարին ԿՌԿ ադվոկացիոն թիմի համակարգող Աննա Հովհաննիսյանը Ժնևում մասնակցեց Հայաստանի պարբերական դիտարկմանն ընդառաջ կազմակերպված նախանիստերին՝ ներկայացնելով առաջարկություններ գենդերային հավասարության, սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների ու աշխատանքային իրավունքների վերաբերյալ:

Նա հնարավորություն ունեցավ անձամբ հանդիպելու շուրջ 15 երկրների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով կանանց իրավունքների ոլորտում Հայաստանի առաջընթացն ու առկա մարտահրավերները:*

Մարտին Աննա Հովհաննիսյանը մասնակցեց Նյու Յորքում անցկացվող ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 69-րդ նստաշրջանին՝ միանալով այլ ֆեմինիստների, կառավարության ներկայացուցիչների և ակտիվիստների՝ քննարկելու կանանց իրավունքների պաշտպանության գլոբալ մարտահրավերներն ու հետընթացի վտանգները:

Այս տարվա թեման ընդգծում էր սեռական և վերարտադրողական իրավունքների պաշտպանության հրատապ անհրաժեշտությունը՝ հատկապես ի պատասխան միջազգային մակարդակով արձանագրվող նահանջի միտումներին:

** Մայիսի 1-ին ՀՊԴ 49-րդ նստաշրջանի ընթացքում Հայաստանը ստացավ մի շարք կարևոր առաջարկություններ, որոնք համահունչ էին ԿՌԿ ներկայացրած առաջարկություններին. ժամանակակից հակաբեղմնավորիչների և ՍՎԱԻ ծառայությունների մատչելիություն, համապարփակ սեռական դաստիարակության ներդրում, գենդերային հավասարության խթանում աշխատանքում, հավասար աշխատավարձ և ոտնձգությունների կանխարգելում և այլն:*

ՀՀ գենդերային քաղաքականություն

2025թ. հունիսի 26-ին կազմակերպեցինք քննարկում՝ նվիրված «ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և գործողությունների ծրագրին»՝ ուշադրությունը կենտրոնացնելով առողջապահության և սոցիալ-տնտեսական ոլորտներին վերաբերող նպատակների վրա: Քննարկմանը ներկա էին ինչպես կառավարության, այնպես էլ օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ և քաղաքացիական հասարակության անդամներ:

Կանանց ռեսուրսային կենտրոնն ակտիվ մասնակցություն է ունեցել ռազմավարության ձևավորման գործընթացին՝ նպաստելով այնպիսի դրույթների ներառմանը, ինչպիսիք են սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների ապահովման ուղղված միջոցառումները:

Նշանակալի դրույթներն են՝ բժշկական աբորտի հասանելիություն ամբուլատոր հաստատություններում, գենդերազգայուն չափորոշիչներ համընդհանուր առողջապահական ապահովագրության մեջ, անվճար հակաբեղմնավորիչներ խոցելի խմբերի համար:

2025թ. հուլիսի 24-ին հանդիպում ունեցանք կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների 25 ներկայացուցիչների հետ, որի նպատակն էր քննարկել պետության կողմից իրականացվող ծրագրերը գենդերային հավասարության խթանման ուղղությամբ և դրանց շուրջ մեր հետագա անելիքները: Հանդիպումը տեղեկատվություն փոխանակման, ռեֆլեքսիայի և հնարավոր անելիքները ուրվագծելու համար էր:

Իրավական դասընթաց. գենդերային բռնության դեպքերի արդյունավետ վարում

Սեպտեմբերի 29–30-ին կազմակերպեցինք իրավաբանների համար թեմատիկ դասընթաց՝ «Գենդերային բռնության դեպքերի արդյունավետ վարման իրավական շրջանակը» խորագրով:

Դասընթացի նպատակն էր զարգացնել մասնակիցների կարողությունները ընտանեկան և սեռական բռնության դեպքերում իրավաբանական աջակցության տրամադրման հարցում՝ ապահովելով նրանց գիտելիքները գործող օրենսդրության, դատական պրակտիկայի և միջազգային ստանդարտների վերաբերյալ:

Դասընթացին մասնակցում էին մարդու իրավունքների ոլորտում աշխատող իրավաբաններ, ակադեմիայի ներկայացուցիչներ և իրավաբանական ֆակուլտետների ուսանողներ:

Բազմակի ճգնաժամեր և աղքատության գենդերային ազդեցություն

Նոյեմբերի 7-ին տեղի ունեցավ «Բազմակի ճգնաժամերը և խորացող անհավասարությունը. ինչպես է աղքատությունը ազդում կանանց կյանքի վրա Հայաստանում» խորագրով քննարկում:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին «Սոցիոսկոպ» ՀԿ-ի կողմից ԿՌԿ աջակցությամբ իրականացված «Հայաստանում աղքատության գենդերային ասպեկտը բազմակի ճգնաժամերից հետո» հետազոտության արդյունքները:

Քննարկման պանելում մասնակիցները անդրադարձան այն մեխանիզմներին, որոնք այսօր հասանելի են կանանց աղքատության հաղթահարման համար, ինչպես նաև ընդգծեցին քաղաքականության ձևավորման և պետական ծրագրերի բարելավման անհրաժեշտությունը:

Հանդիպմանը մասնակցում էին պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Աջակցություն Հայաստանում կանանց կայուն քաղաքացիական հասարակության կազմակերպմանը բազմակի ճգնաժամերի համատեքստում»

Շվեդիայի աջակցությամբ արդեն չորրորդ տարին ընթացող այս ծրագրի շրջանակներում ԿՌԿ-ն ունի ենթադրամաշնորհային գործընկերներ, որոնք այս տարի հետևյալ նախաձեռնություններն են իրականացրել.

- Հայաստանում կանանց հիմնադրամը կազմակերպել է կարողությունների զարգացման առցանց դասընթացներ՝ գենդերի, բարեկեցության և կլիմայի փոփոխության թեմաներով, ինչպես նաև հրատարակել է կոլեկտիվ խնամքի, տրավմայի վրա հիմնված ֆեմինիստական առաջնորդության և կոլեկտիվ տրավմաներին կոլեկտիվ արձագանքների վերաբերյալ հրապարակումներ:

- Կանանց հզորացման ռեսուրս կենտրոնն իրականացրել է տեխնոլոգիաների միջոցով բռնության (TFV) շուրջ իրազեկվածության բարձրացման և կարողությունների զարգացման նախագիծ՝ կանանց համար կազմակերպելով կիբերանվտանգության և առցանց անվտանգության դասընթացներ:

- Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը մշակել է աշխատավայրում սեռական ոտնձգությունների կանխարգելման և արձագանքման գործիքակազմ, որը ներառում է օրենսդրորեն համապատասխան մոդելային քաղաքականություն, բողոքարկման ընթացակարգ և մարդկային ռեսուրսների մասնագետների և գործատուների համար գործնական ուղեցույց:

- Կանանց կենտրոն. Շուշին ուսումնասիրել է սահմանամերձ շրջաններում բնակվող տեղահանված կանանց առջև ծառացած խնդիրները, որոնք հիմք են հանդիսացել նրանց զբաղվածության վիճակի, վերարտադրողական իրավունքների և գենդերային բռնության հետ կապված փորձի վերաբերյալ համապարփակ զեկույցի համար:

- Սոցիոսկոպն իրականացրել է «Հայաստանում աղքատության գենդերային ասպեկտը բազմակի ճգնաժամերից հետո» խորագրով հետազոտություն, որի արդյունքները ներկայացվել ու քննարկվել են հասարակական կազմակերպությունների և կառավարության ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացված համաժողովի ընթացքում:

- Մարդու իրավունքների տուն Երևանը իրականացրել է կարողությունների զարգացման դասընթաց նոր ակտիվիստների համար՝ բարձրացնելու իրազեկվածությունը Հայաստանում կին իրավապաշտպանների առջև ծառացած մարտահրավերների վերաբերյալ:

Կանանց քայլարշավ 2025. Կոտայք

Սեպտեմբերի 8-12-ը Կանանց ռեսուրսային կենտրոնը, որպես նախաձեռնող թիմի անդամ, կազմակեպեց Կանանց քայլարշավ ՛25-ը Կոտայքի մարզում:

Կանանց քայլարշավը ֆեմինիստական նախաձեռնություն է՝ ուղղված մարզաբնակ կանանց կյանքին ու փորձառությանը ծանոթանալուն և ընտանեկան ու գենդերային բռնության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելուն: Գյուղական և փոքր քաղաքային համայնքներ այցելելով՝ մենք տեղում ծանոթանում ենք կանանց իրավիճակին հենց նրանց դիտանկյուններից ու փորձում վերհանված հիմնախնդիրների համար արձագանքման մեխանիզմներ գտնել և ստեղծել:

Այս տարի Կոտայքում կանանց իրավիճակի մասին տեղեկություններ ենք հավաքագրել 1000-ից ավելի կանանցից՝ այցելելով 20+ համայնք:

Շուտով մեր կայքում հասանելի կլինի Կանանց քայլարշավ 2025-ի դիտարկումների ուսումնասիրությունը, որը կամփոփի հիմնական արդյունքները: Մինչ այդ կարող եք ծանոթանալ նախնական վերլուծությանը՝ դիտելով մամլո ասուլիսը:



ԱՋԱԿՑԵՔ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

www.womenofarmenia.org